# ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ կոնախմբվեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Առավոտյան Սուրբ Հռիփսիմե վանքի մոտ հավաքված Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող Հայորդյաց տների հարյուրավոր սաներ ավանդական քայլերթով շարժվեցին դեպի համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Թմբուկների ձայների եւ փողային նվագախմբի կատարումների ներքո մանուկները, ավետելով քաղաքի բնակիչներին Տիրոջ Սուրբ Հարության ավետիսը, հասան Մայր Աթոռ եւ հավաքվեցին Միածնաէջ տաճարի առջեւ՝ դիմավորելու Հայրապետական շքեղ թափորը:

Ժամը $10^{30}$-ին Մայր Տաճարի զանգերի հոգեպարար ղողանջների ներքո Վեհարանից շարժվեց խաչերով ու խաչվառներով պսակված թափորը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին ամփոփվանիով առաջնորդելով դեպի Սուրբ Տաճար: Հայրապետական ամփոփվանակիրներն էին «Իպառ-Տասսի» թղթակից Տիգրան Լիլոյանը, ՀՀ ԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն Ավետիք Իսահակյանը, երգահան Արա Գեւորգյանը եւ բռնցքամարտիկ Վախթանգ Դարչինյանը:

Սուրբ եւ Անմահ Պատարագի Սրբազան արարողության ընթացքին Նորին Սրբության առընթերականներն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը եւ Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսով եւ Հայրապետական սիրով Վեհափառ Հայրապետն իր ողջույնները հղեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին, Քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին, Հայաստանյայց Եկեղեցու բարեջան բոլոր սպասավորներին եւ հավատավոր ժողովրդին:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու ողջույնը բերեց Ս. Պատարագին ներկա ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին եւ պետական ավագանուն՝ մաղթելով նոր հաջողություններ՝ ի սեր մեր Հայրենիքի եւ հանուր հայ կյանքի:

Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ Նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Հավարտ Սուրբ Պատարագի Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն ամենքին վերստին փոխանցեց Տիրոջ հրաշափառ Հարության հոգենորոգ ավետիսը:



Ոտնլվա